ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 14/1-Ա «24» 01 2025թ.

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ուսումնական ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և «ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով» սահմանված կարգով կիրառել կարգապահական տույժ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյանի և ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան

1. 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի **ուսումնական պարապմունքները սկսել՝**

ա/ առկա ուսուցման համար՝ փետրվարի 3-ին և ավարտել մայիսի 30-ին,

բ/ հեռակա ուսուցման համար՝ մարտի 10-ին և ավարտել մայիսի 31-ին,

գ/ առկա ուսուցման մագիստրատուրայի 60 ECTS և 120 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսերի համար՝ սկսել փետրվարի 3-ին և ավարտել մարտի 28-ին,

դ/ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրսի համար՝ սկսել մարտի 10-ին և ավարտել ապրիլի 12-ին:

2. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի **ստուգարքների ընդունումը կազմակերպել՝**

ա/ առկա ուսուցման բակալավրիատ և մագիստրատուրա՝ մայիսի 26-ից մայիսի 30-ը,

բ/ հեռակա ուսուցման բակալավրիատ և մագիստրատուրա՝ մայիսի 26-ից մայիսի 31-ը,

գ/ առկա ուսուցման մագիստրատուրայի 60 ECTS և 120 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրս՝ մարտի 26-28-ը,

դ/ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրս՝ ապրիլի 10-12-ը:

3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման **քննաշրջաններն անցկացնել** հունիսի 2-21-ը,

ա/ առկա ուսուցման մագիստրատուրայի 60 ECTS և 120 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրս՝ մարտի 31-ից ապրիլի 4-ը,

բ/ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրս՝ ապրիլի 14-19-ը:

4. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման **պարտքերի մարում սահմանել՝**

ա/ 1-ին լուծարքային շրջան՝ հունիսի 27-ից հուլիսի 3-ը,

բ/ 2-րդ լուծարքային շրջան՝ օգոստոսի 22-30-ը,

գ/ առկա ուսուցման մագիստրատուրայի 60 ECTS և 120 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրս՝

- առաջին լուծարքային շրջան՝ ապրիլի 7-11-ը,
- երկրորդ լուծարքային շրջան՝ ապրիլի 14-18-ը,

դ/ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 90 ECTS կրեդիտատարություն ունեցող կրթական ծրագրերի ավարտական կուրս՝

- առաջին լուծարքային շրջան՝ ապրիլի 21-26-ը,
- երկրորդ լուծարքային շրջան՝ ապրիլի 28-ից մայիսի 3-ը:

5. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի **ուսումնական պարապմունքները սկսել՝**

ա/ առկա ուսուցման համար՝ սեպտեմբերի 1-ին և ավարտել դեկտեմբերի 26-ին,

բ/ հեռակա ուսուցման 1-ին կուրսի համար՝ նոյեմբերի 10-ին և ավարտել հունվարի 24-ին,

գ/ հեռակա ուսուցման 2-րդ և բարձր կուրսերի համար՝ նոյեմբերի 3-ին և ավարտել հունվարի 24-ին:

6. Առկա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա **շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել՝**

ա/ բակալավրիատ՝ մայիսի 2-30-ը,

բ/ մագիստրատուրա՝ մայիսի 2-23-ը

գ/ մանկավարժի լրացուցիչ կրթաբլոկ՝ մայիսի 19-ից հունիսի 6-ը:

7. Հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը (այդ թվում՝ մանկավարժի լրացուցիչ կրթաբլոկի շրջանավարտներինը) կազմակերպել 2025թ. հունիսի 3-20-ը:

8. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ քննությունները և պրակտիկայի ստուգարքը): Ամսական վճարման պարագայում՝ 1-ին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցել 2 ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

Նախքան ավարտական կուրսերի ուսանողների նախապաշտպանությունների մեկնարկը՝ առնվազն 3 օր առաջ, ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի անունով ներկայացնել զեկուցագիր ուսման վաճավճարի պարտք ունեցող և համալսարանից հեռացման ենթակա ուսանողների վերաբերյալ:

9. Բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ կազմակերպչական բաժին ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքները և «Ավարտական աշխատանքի պաշտպանությանը թույլտվություն տալու մասին» հրամանների նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ:

10. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ մագիստրատուրայի բաժին ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգում (այսուհետ՝ e-learning.ysu.am համակարգ) կատարած մուտքագրումների հաշվետվությունները, մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների արդյունքները և «Մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլտվություն տալու մասին» հրամանների նախագծերը՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ:

11. Ամփոփիչ ատեստավորման վերջին օրվան հաջորդող օրը կազմակերպել հանձնաժողովների նիստերը, որից հետո մեկօրյա ժամկետում կազմակերպչական բաժին ներկայացնել ուսանողների ավարտման հրամանների նախագծերը և բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների անձնագրային տվյալները (ա.,ա.,հ.) 3 լեզվով՝ ստորագրված շրջանավարտների կողմից:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները կազմակերպչական բաժին ներկայացնել վերջին քննությունից հետո հնգօրյա ժամկետում (ըստ 4-րդ ձևի):

12. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը նախորդող 1 շաբաթվա ընթացքում բակալավրիատի բաժին ներկայացնել գրախոսության համար նախատեսված ժամաքանակի զեկուցագրերը:

13. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն 1 շաբաթ առաջ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում (այսուհետ՝ SV համակարգ) մուտքագրել մագիստրոսական թեզերի արտաքին գրախոսների տվյալները:

14. Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն 3 շաբաթ առաջ մագիստրատուրայի բաժին ներկայացնել միջամբիոնային հանձնաժողովների եզրակացությունները՝ միջմասնագիտական մագիստրոսական թեզերի վերաբերյալ:

15. Պրակտիկայի սկսվելուց 10 օր առաջ պրակտիկայի ղեկավարին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների հրամանների նախագծերը՝ ուսանողներին տեղաբաշխելով ըստ նախապես համաձայնեցված վայրերի: Պրակտիկայի ավարտից հետո տասնհինգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվությունները:

16. Ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքների հանձնման ակտ) բակալավրիատի բաժին ներկայացնել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

17. Բացակայող աշխատողներին փոխարինելու մասին զեկուցագրերը ԵՊՀ ռեկտորին կամ ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին ներկայացնել փոխարինման անհրաժեշտություն առաջանալու պահից առավելագույնը եռօրյա ժամկետում:

18. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողական իրավունքները վերականգնող և տեղափոխվող ուսանողների վերակնքված պայմանագրերը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հրամանագրումից հետո երկօրյա ժամկետում:

19. Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների ատեստավորումը կազմակերպել e-learning.ysu.am համակարգում նշված ժամկետների համաձայն:

20. Յուրաքանչյուր ամսվա ավարտին ուսումնական ստորաբաժանման գրասենյակում ամփոփել ուսանողների բացակայությունները և թույլատրելի շեմը գերազանցելու դեպքում ներկայացնել զեկուցագիր ռեկտորին:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<u>Հունվար</u>

-Մինչև հունվարի 30-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

-Մինչև հունվարի 31-ը ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:

-Մինչև հունվարի 31-ը բակալավրիատի բաժնի հետ համատեղ կազմակերպել առկա և հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսի ուսանողների կողմից «Շարժունության պատուհանի» հարակից դասընթացների ընտրության հաստատման և SV համակարգում խմբերի ձևավորման գործընթացը:

-Մինչև հունվարի 31-ը բակալավրիատի բաժին ներկայացնել 2-րդ կիսամյակի ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների վերաբերյալ զեկուցագրերը:

-Մինչև հունվարի 31-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման լուծարքային հանձնաժողովների կազմերը:

-Մինչև հունվարի 31-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուստարվա 1-ին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

<u>Փետրվար</u>

-Փետրվարի 3-11-ը ապահովել դասախոսի կողմից Ռեգիստրար համակարգում ընթացիկ կիսամյակում դասավանդվող առկա ուսուցման դասընթաց(ներ)ի բաղադրիչների՝ ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն, առավելագույն միավորների մուտքագրումը:

-Փետրվարի 7-13-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցերը և քննական հանձնաժողովների կազմերը:

-Մինչև փետրվարի 10-ը ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի **առկա և հեռակա** ուսուցման դասընթացի կրկնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով, այնուհետև

ուղարկել համապատասխան զեկուցագրերը՝ դասընթացների կազմակերպման վերաբերյալ առաջարկներով:

-Մինչև փետրվարի 10-ը կազմակերպչական բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնորդների փաստաթղթերի փաթեթները՝ հիմք ընդունելով համապատասխան կարգի դրույթները:

-Մինչև փետրվարի 12-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման մագիստրանտների ավարտման մասին հրամանները:

-Մինչև փետրվարի 12-ը կազմակերպչական բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները (ըստ 4-րդ ձևի):

-Մինչև փետրվարի 14-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի դասատախտակները:

Վերջնաժամկետից հետո ԵՊՀ բոլոր լսարանները հասանելի են բոլոր ուսումնական ստորաբաժանումների համար:

-Մինչև փետրվարի 17-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները (ձև 10):

-Մինչև փետրվարի 17-ը բակալավրիատի և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակում դասավանդվող դասընթացների պլանները տեղադրել e-learning.ysu.am համակարգի համապատասխան դասընթացի էջում:

-Մինչև փետրվարի 25-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև փետրվարի 28-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով:

Մարտ

-Մինչև մարտի 3-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

-Մինչև մարտի 3-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցերը:

-Մինչև մարտի 5-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

-Մինչև մարտի 7-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման լուծարքային հանձնաժողովների կազմերը:

-Մարտի 10-18-ը ապահովել դասախոսի կողմից Ռեգիստրար համակարգում ընթացիկ կիսամյակում դասավանդվող հեռակա ուսուցման դասընթաց(ներ)ի բաղադրիչների՝ ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն, առավելագույն միավորների մուտքագրումը:

-Մինչև մարտի 10-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորի հաստատմանը ներկայացնել երկրորդ կիսամյակի համար պրոֆեսորի օգնականի հավակնորդների ցանկը:

-Մարտի 10-31-ը բակալավրիատի բաժնի հետ համատեղ կազմակերպել առկա և հեռակա բակալավրատի և մագիստրատուրայի (90 և 120 ECTS կրեդիտ) կրթական ծրագրերի ուսանողների կողմից Ռեգիստրար համակարգում կամընտրական դասընթացների ընտրության գործընթացը:

-Մինչև մարտի 14-ը մագիստրատուրայի բաժնի հետ համատեղ SV համակարգում ամրագրել մագիստրատուրայի առկա ուսուցման ավարտական կուրսերի քննաշրջանների ժամանակացույցերը:

-Մինչև մարտի 14-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ սահմանված ձևով SV համակարգ մուտքագրել բակալավրիատի առկա ուսուցման 2025-2029թթ., հեռակա ուսուցման 2025-2030թթ., մագիստրատուրայի առկա 2025-2026թթ., 2025-2027թթ. և հեռակա ուսուցման 2025-2027թթ., 2025-2028թթ. ուսումնական պլանները:

-Մինչև մարտի 21-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների տվյալները:

-Մինչև մարտի 28-ը բակալավրիատի բաժին ներկայացնել 1-ին և 2-րդ ընթացիկ քննությունների ընթացքում հետազոտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցերը:

Ապրիլ

-Մինչև ապրիլի 1-ը մագիստրատուրայի բաժնի հետ համատեղ SV համակարգում ամրագրել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի ժամանակացույցը:

-Մինչև ապրիլի 3-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ առկա ուսուցման մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողների շրջանում 2024-25 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

-Մինչև ապրիլի 3-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների ժամանակացույցերը:

-Մինչև ապրիլի 4-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի 2-րդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով:

-Ապրիլի 4-10-ը ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:

-Մինչև ապրիլի 7-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին ներկայացնել զեկուցագիր՝ 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակի վերաբերյալ՝ նշելով

տետրերի ծավալը (էջերի թիվը): ***Ներկայացված զեկուցագիրը նաև հիմք է նշված քանակով տետրերը պահեստից ստանալու համար:***

-Մինչև ապրիլի 7-ը ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին ներկայացնել զեկուցագիր՝ 2025-2026 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակի վերաբերյալ՝ նշելով տեսակը (փոքր, միջին, մեծ): ***Ներկայացված զեկուցագիրը նաև հիմք է նշված քանակով դասամատյանները պահեստից ստանալու համար:***

-Մինչև ապրիլի 8-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի (այդ թվում՝ մանկավարժի լրացուցիչ կրթաբլոկի) վերաբերյալ հրամանների նախագծերը:

-Մինչև ապրիլի 8-ը կազմակերպչական բաժին ներկայացնել առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը:

-Մինչև ապրիլի 8-ը բակալավրիատի բաժին ներկայացնել մանկավարժի լրացուցիչ որակավորում ստանալու համար ուսանողների անվանական ցանկը՝ ըստ կրթական ծրագրերի:

-Մինչև ապրիլի 9-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները:

-Մինչև ապրիլի 11-ը մագիստրատուրայի բաժնի հետ համատեղ SV համակարգում ամրագրել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսի լուծարքային հանձնաժողովի կազմը:

-Մինչև ապրիլի 17-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ հեռակա ուսուցման մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողների շրջանում 2024-25 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

-Ապրիլի 17-23-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցերը և քննական հանձնաժողովների կազմերը:

-Մինչև ապրիլի 19-ը մագիստրատուրայի բաժնի հետ համատեղ SV համակարգում ամրագրել մագիստրատուրայի առկա ուսուցման ավարտական կուրսի լուծարքային հանձնաժողովի կազմը:

-Մինչև ապրիլի 23-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել մագիստրատուրայի առկա ուսուցման ավարտական կուրսի 2-րդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև ապրիլի 23-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները:

Մայիս

-Մինչև մայիսի 2-ը ԵՊՀ պաշտոնական կայքէջում (www.ysu.am) վերախմբագրել 2025-2026 ուսումնական տարում մագիստրատուրայի առկա ուսուցման ընդունելություն հայտարարած կրթական ծրագրերի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ բաժինը:

-Մինչև մայիսի 5-ը մագիստրատուրայի բաժնի հետ համատեղ SV համակարգ մուտքագրել ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում հաստատված մագիստրատուրայի հեռակա ուսուցման 120 ECTS կրեդիտատարությամբ կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և ղեկավարների անվանական տվյալները՝ հիմք ընդունելով 2024-2025 ուսումնական տարվա հաստատված անհատական ծանրաբեռնվածությունները:

-Մինչև մայիսի 7-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև մայիսի 8-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ավարտական կուրսի 2-րդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև մայիսի 13-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման քննաշրջանի ժամանակացույցերը:

-Մինչև մայիսի 13-ը կազմակերպչական բաժին ներկայացնել հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը:

-Մինչև մայիսի 15-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգ մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման աշխատանքային ուսումնական պլանները:

-Մինչև մայիսի 16-ը ԵՊՀ պաշտոնական կայքէջում (www.ysu.am) վերախմբագրել 2025-2026 ուսումնական տարում մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելություն հայտարարած կրթական ծրագրերի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ բաժինը:

-Մինչև մայիսի 23-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել տվյալներ առկա և հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

-Մինչև մայիսի 30-ը SV համակարգ ներբեռնել առկա ուսուցման բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները (առկա ուսուցում):

<u>Հունիս</u>

-Մինչև հունիսի 2-ը բակալավրիատի բաժին ներկայացնել հիմնական կամ ներքին համատեղությամբ (դրույքով) աշխատող դասավանդողների կողմից (բացառությամբ դասախոսի տարակարգի) գործող ուսումնական տարվա ընթացքում տպագրված հոդվածների վերաբերյալ հաշվետվություն:

-Մինչև հունիսի 2-ը բակալավրիատի բաժնի հետ համատեղ SV համակարգում մուտքագրել կամ խմբագրել պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները:

-Մինչև հունիսի 2-ը մագիստրատուրայի բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ոչ ավարտական կուրսերի թեզերի ատեստավորման արդյունքները՝ հիմք ընդունելով e-learning.ysu.am համակարգում ներկայացված հաշվետվությունները:

-Մինչև հունիսի 3-ը բակալավրիատի բաժին ներկայացնել ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարների և ղեկավարման ժամկետի մասին Դոկտորական կրթության կենտրոնի կողմից հաստատված ձևաթղթերը:

-Մինչև հունիսի 3-ը բակալավրիատի բաժնի հետ համատեղ SV համակարգ մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ամբիոնային բեռնվածությունները և դասախոսների անհատական բեռնվածությունները:

-Մինչև հունիսի 6-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (ձև 10):

-Մինչև հունիսի 12-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում քննարկված բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ քաղվածքները («Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 114-րդ կետի պահանջներին համապատասխան):

-Հունիսի 20-30-ը ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով:

-Մինչև հունիսի 25-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման լուծարքային հանձնաժողովների կազմերը:

-Մինչև հունիսի 26-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել հաշվետվություն՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):

-Մինչև հունիսի 27-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալները, իսկ հաշվետվության 34 ձևը՝ ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

-Մինչև հունիսի 30-ը SV համակարգ ներբեռնել հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները:

<u>Հուլիս</u>

-Մինչև հուլիսի 4-ը ուսումնական գործընթացի վերահսկման բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (ձև 10):

-Հուլիսի 6-13-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի՝ մինչև 12 կրեդիտ

առարկայական պարտքերի վերահանձնման ժամանակացույցերը և քննական հանձնաժողովների կազմերը:

-Մինչև հուլիսի 12-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների՝ կուրսից կուրս փոխադրման հրամանները:

-Մինչև հուլիսի 15-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգ մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասատախտակները (1-ին կուրսերինը՝ նախնական տարբերակով): Վերջնաժամկետից հետո ԵՊՀ բոլոր լսարանները հասանելի են բոլոր ուսումնական ստորաբաժանումների համար:

-Մինչև հուլիսի 18-ը SV համակարգում (դիպլոմների հաշվետվություն) ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա շրջանավարտների անձնագրային տվյալները և ստուգել ընդունման և ավարտման հրամանները:

Օգոստոս

-Օգոստոսի 22-ից սեպտեմբերի 8-ը ընդհանուր բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի **առկա և հեռակա** ուսուցման դասընթացի կրկնման դիմումները՝ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ և վճարման անդորրագրերով, այնուհետև ուղարկել համապատասխան զեկուցագրերը՝ դասընթացների կազմակերպման վերաբերյալ առաջարկներով:

Սեպտեմբեր

-Մինչև սեպտեմբերի 3-ը բակալավրիատի բաժնի հետ համատեղ առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպել Օտար լեզու և Ֆիզիկական դաստիարակություն դասընթացների ընտրությունը Ռեգիստրար համակարգում:

-Մինչև սեպտեմբերի 4-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքի արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև սեպտեմբերի 4-ը կազմակերպչական և մագիստրատուրայի բաժիններ ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի՝ առկա և հեռակա ուսուցման՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

-Մինչև սեպտեմբերի 8-ը բակալավրիատի բաժնի հետ համատեղ SV համակարգում ձևավորել և հաստատել լեզվական խմբերը՝ ըստ թեստավորման արդյունքների, և Ֆիզիկական դաստիարակության սեկցիոն խմբերը՝ ըստ կատարված ընտրության:

-Մինչև սեպտեմբերի 8-ը կազմակերպչական բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի հավակնորդների փաստաթղթերի փաթեթները՝ հիմք ընդունելով համապատասխան կարգի դրույթները:

-Մինչև սեպտեմբերի 8-ը մագիստրատուրայի բաժնի հետ աշխատանքային պլաններում ամրագրել ճշգրտված լեզվական խմբերը:

-Մինչև սեպտեմբերի 10-ը ուսումնական ստորաբաժանումների մանդատային հանձնաժողովներում հաստատել փոխատեղման (ռոտացիա) հավակնորդների ցուցակները և ներկայացնել ֆինանսական վերլուծությունների վարչություն:

-Մինչև սեպտեմբերի 15-ը բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինների հետ համատեղ SV համակարգ մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասատախտակները (բացառությամբ 1-ին կուրսի):

Վերջնաժամկետից հետո ԵՊՀ բոլոր լսարանները հասանելի են բոլոր ուսումնական ստորաբաժանումների համար:

-Մինչև սեպտեմբերի 15-ը կազմակերպչական բաժին ներկայացնել ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների առարկայական տարբերությունները հանձնելու ժամանակացույցը և քննական հանձնաժողովների կազմը:

Ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան